ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի գ. Ջրարբիում 288 աշակերտական տեղով դպրոցի կառուցման նախագծի վերաբերյալ հանրային լսում

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածի 5-րդ գլխով սահմանված կարգով 2025 թ.-ի փետրվարի 7-ին ժամը 14:30-ին, Արմավիր համայնքի Ջրարբիի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) ծրագրի շրջանակում ՀՀ Արմավիրի մարզի գ. Ջրարբիում 288 աշակերտական տեղով դպրոցի կառուցման նախագծի վերաբերյալ հանրային լսում:

Հանրային լսման մասին հայտարարությունը հրապարակվել է Արաքսի համայնքապետարանի պաշտոնական կայքում, սոցիալական էջում և Ջրարբի գյուղի սոցիալական էջում և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կայքում (ATDF) (atdf.am):

Ծրագրի անվանում՝ ՀՀ Արմավիրի մարզի գ. Ջրարբիում գտնվող գոյություն ունեցող դպրոցի տարածքում 288 աշակերտական դպրոցի կառուցում դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում

Ծրագրի իրականացնող կազմակերպություն՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏԶՀ),

Նախագծային կազմակերպություն՝ «Մառա և դուստրեր» ՍՊԸ

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Ն. Զաքարյան	Ջրարբի բնակավայրի դպրոցի տնօրեն
Ա. Սարգսյան	Ջրարբիի վարչական ղեկավար
Մ. Վարդանյան	ՀՏԶՀ, սոցիալական մասնագետ
Մ. Հուսնյան	«Մառա և դուստրեր» ՍՊԸ, տնօրեն
Ռ. Հակոբյան	«Մառա և դուստրեր» ՍՊԸ, ճարտարապետ

Մասնակցում էին նաև ուսուցչական և ծնողական կազմը, այլ շահագրգիռ կողմեր: Մասնակիցների ընդլայնված ցանկը (2 էջ) և տեսաձայնագրությունը ներկայացվում է կից:

Օրակարգում

1) Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ընթացակարգի ներկայացում
2) Դպրոցի նախագծի ներկայացում
3) Ենթածրագրին առաջադրվող բնապահպանական և սոցիալական պահանջների ներկայացում
4) Հարց ու պատասխան շահագրգիռ կողմերի հետ

Ելույթ ունեցան

1. Ջրարբիի վարչական ղեկավար Ա. Սարգսյանը հանդես եկավ ողջույնի խոսքով, ներկայացրեց հանդիպման նպատակը և մասնակիցներին:

2. ՀՏՋՀ սոցիալական մասնագետ Մ. Վարդանյանը, ով ներկայացրեց ծրագրի շրջանակներում գործող բնապահպանական և սոցիալական երաշխիքները, ինչպես նաև Բողոքների լուծման մեխանիզմը:

3. Ենթածրագրի ճարտարապետ Ռ. Հակոբյանը ներկայացրեց դպրոցի կառուցման ճարտարապետական և կոնստրուկտիվ նախագծային լուծումները :

Հարցեր տրվեցին

1. **Հարց 1**. Քանի՞ տեղի համար է նախատեսված դպրոցը:

Պատասխան. Դպրոցը նախատեսված է 288 աշակերտական տեղով:

2. **Հարց 2.** Արդյո՞ք լուծված է սեյսմիկ անվտանգության հարցը, ինչպես որ ասվում է ծրագրի անվանման մեջ:

Պատասխան. Դպրոցի նախագիծը իրականացված է ծրագրին համապատասխան:

3. **Հարց 3** Արդյո՞ք առանձնացված են կաբինետներ:

Պատասխան. Այո, բոլոր անհրաժեշտ կաբինետները կան՝ իրենց լաբորանտականներով (Ֆիզիկա, քիմիա, ռազմագիտություն և այլն):

4. **Հարց 4.** Նախատեսվա՞ծ է արդյոք սպորտդահլիճ:

Պատասխան. Այո, սպորտդահլիճ նախատեսված է:

5. **Հարց 5.** Նախատեսվա՞ծ է արդյոք վերելակ:

Պատասխան. Այո, նախատեսված է: Նախատեսված են նաև թեքհարթակներ:

6. **Հարց 6.** Նախատեսվա՞ծ է արդյոք ճաշարան:

Պատասխան. Այո, այն գտնվում 1-ին հարկում:

7. **Հարց 7.** Քանի՞ հարկանի է դպրոցը:

Պատասխան. Դպրոցը ունի չորս հարկ, երեք վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկ, որպես թաքստոց:

8. **Հարց 8.** Հարմարեցվա՞ծ է արդյոք պահակակետը:

Պատասխան. Այո, այն հարմարեցված է մուտքի մոտ:

9. **Հարց 9.** Ո՞ր կողմ են նայում դասասենյակների պատուհանները:

Պատասխան. Տիպային նախագիծը տեղակայված է հողամասի սահմաններին համապատասխան: Պատուհանների տեղաբաշխումը կլինի տարբեր, քանի որ չորս կողմից էլ կան:

10. **Հարց 10.** Գործողությունների ի՞նչ հերթականություն կա:

Պատասխան. Առաջնային անհրաժեշտ է լուծել համայնքի կողմից լրացուցիչ հողի հատկացման հարցը և ինժեներական ապահովման տեխնիկական պայմանների լուծումներնը:

11. **Հարց 11.** Որքա՞ն ժամանակ կտևի շինարարությունը:

Պատասխան. Շինարարությունը կտևի 2 տարի:

Պատասխանատու և Վարող՝ Ջրարբիի վարչական ղեկավար — Ա. Սարգսյանը

Արձանագրող՝

Ձեռնարկող՝ «Մառա և դուստրեր» ՍՊԸ, տնօրեն — Մ. Հունյան